

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԿԱՅԱՑԱՆ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ՝ ԿՐԱՍՏԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՐ



Հոկտեմբերի 27-ին անցկացված նախագահական ընտրություններում, նախնական տվյալներով, հաղթող է ճանաչվել «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին: Նա արժանացել է ընտրությունների մասնակիցների 62,1 տոկոսի աջակցությանը:

Նախագահական մրցակազմի հաղթող Գիորգի Մարգվելաշվիլուն հաջորդում են.

Դավիթ Բաքրաձեն «Միասնական ազգային շարժում» - 21,73 տոկոս:

Նինո Բուրջանաձեն «Ժողովրդավարական շարժում՝ Միասնական Վրաստան» - 10,18 տոկոս:

Շավա Նաթելաշվիլին «Լեյբորիստական կուսակցություն» - 2,88 տոկոս,

Գիորգի Թարգամաձեն «Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն» - 1,05 տոկոս:

Մնացած 20 թեկնածուները, ընդհանուր առմամբ, ստացել են ընտրողների ձայների 0,22-ից մինչև 0,04 տոկոսը:

### ԲԻՉԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀՐԱՇՔ ԳՈՐԾԵՑ ԵՎ ԱՆՑԿԱՑՐԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հոկտեմբերի 28-ին Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին եւ նախագահական ընտրությունների արդյունքներով հաղթանակած «Վրացական երազանք» կոալիցիայի թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցան լրագրողների հետ:

«Վրաստանի ժողովուրդը հրաշք գործեց եւ անցկացրեց եվրոպական ընտ-

րություն»,- հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին՝ հավելելով, որ դա համընդհանուր

նվաճում է, եւ դրանով կարելի է հպարտանալ: Դա մեր բարձր կուլտուրայի արդյունքն է»,- հայտարարեց Իվանիշվիլին:

Միաժամանակ, Բիժինա Իվանիշվիլին խոսեց նաեւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԿՈՇԱԲԻՏԱՅԻԱՅԻ ԱՎԱՐՏԸ ՄԻԱԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ»

Այդ մասին հոկտեմբերի 28-ին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Նրա խոսքերով, ներկայիս կառավարող թիմը վերահսկում են խորհրդարանն ու նախագահական իշխանությունը, սակայն այն չի գտնվում միակուսակցական պայմանավորումներում: Կոհաբիտացիայի ավարտը չի նշանակում, որ արդի եվրոպական երկրում,

որը մենք ձեւավորելու ենք, կլինի միակուսակցական կառավարում: Իրավիճակը այլ է, երբ իշխանության ճյուղերի միջեւ սկսվում է իշխանության բաժանումը: Դա ավարտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

### ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱԶԵ. «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՉՈՐՐՈՐԴ ԸՆՏՐՈՂԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԻՆՉ»



ների կապակցությամբ:

«Գործնականում յուրաքանչյուր չորրորդ ընտրողը պաշտպանել է ինձ, եւ ես ցանկանում եմ նրանցից յուրաքանչյուրին շնորհակալություն հայտնել համարձակության համար, ով այս պայմաններում, երբ արդեն մեկ տարի պայքար է մղվում Ազգային շարժման դեմ, պաշտպանեց ինձ:

Մենք ապացուցեցինք, որ նման բարդ պայմաններում էլ ընդդիմությունը կարող է վարել քաղաքակիրթ պայքար»,- հայտարարեց Բաքրաձեն:

«Ես պատրաստ եմ ընդունել ԿԵԶ-ի արդյունքները, շնորհավորել Վրաստանի ժողովրդին հաջող անցկացված ընտրությունների կապակցությամբ, շնորհավորում եմ նաեւ Գիորգի Մարգվելաշվիլուն հաղթանակի առթիվ եւ հուսով եմ, որ այս ընտրությունները եւ ցուցաբերած վստահությունն օգուտ կբերեն մեր ժողովրդին»,- հայտարարեց Դավիթ Բաքրաձեն:

### ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱԶԵ. «ՔՍՅԱՆԱՅԵ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ «ԵՐԱՅՆՔԻ» ԵՎ «ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ» ՄԻՋԵՎ»



«Ժողովրդական շարժման» լիդեր Նինո Բուրջանաձեն շնորհակալություն հայտնեց այն մարդկանց, ովքեր ընտրություններին պաշտպանեցին իր թեկնածությունը: Հոկտեմբերի 28-ին անցկացված մամուլի ասուլիսում նա հայտարարեց. «Ընտրությունները կայացան, սակայն իրականում ընտրողները քվեարկեցին Բիժինա Իվանիշվիլու օգտին: Դրանք շատ ավելի ազատ էին, սակայն արդարացի չէին, քանի որ անցկացվեցին «Ազգային շարժման» կողմից ձեւավորված անարդարացի համակարգով: Կոհաբիտացիայի փոխարեն, մենք ստացանք «Ազգային շարժման» եւ «Վրացական երազանքի» միջեւ բացահայտ համագործակցությունը: Ներկայիս իշխանությունը չունի երկրի զարգացման ձեւավորված եւ իրատեսական ծրագիր: Մենք պարտավոր ենք անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի երկրում պահպանենք ուժերի հավասարակշռություն եւ թույլ չտանք մարդկանց վստահության անտեսում»,- հայտարարեց Բուրջանաձեն:

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ

#### ՄԵՐԺ ՄԱՐԳՅԱՆԻ ՈՒՂԵՐՉԸ ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ



Հայաստանի նախագահ Մերժ Մարգարյանը հոկտեմբերի 28-ին շնորհավորական ուղերձ է հղել Գիորգի Մարգվելաշվիլուն: Հայաստանի ղեկավարը Գիորգի



Մարգվելաշվիլուն շնորհավորել է 2013թ. հոկտեմբերի 27-ին կայացած Վրաստանի նախագահի ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ:

Վրաստանում նախագահական ընտրությունները թափանցիկ եւ լավ կազմակերպված անվանեց ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ջեն Փասկին: Նա հաղթանակի առթիվ շնորհավորեց Գիորգի Մարգվելաշվիլուն: Վրաստանի նորընտիր նախագահին շնորհավորել է նաեւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդրեյ Ֆոգ Ռասմուսսենը՝ «Մենք պատրաստ ենք նոր կարգավիճակում համագործակցել նրա հետ»,- հայտարարեց նա: Եվրամիության դիվանագիտության ղեկավար Քեթրին Էշթոնի մամուլի քարտուղար Մայքլ Մենը Գիորգի Եվրամիության անունից գոհունակություն հայտնեց ընտրությունների կազմակերպման եւ անցկացման կապակցությամբ:



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԿԱՅԱՑԱՆ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԶՐԱՇՔ ԳՈՐԾԵՑ ԵՎ ԱՆՑԿԱՑՐԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի բնակչության «քաղաքական անհասունությունը» մասին: Նա այդ անհասունությունը տեսնում է նրանում, որ Միխեիլ Սակաշվիլու «Միասնական ազգային շարժման» թեկնածուները ընտրություններին կարողացավ ստանալ ընտրողների 21 տոկոսի աջակցությունը:

«Դա ինձ համար անսպասելի էր, քանի որ գտնում էի, որ նա չէր կարողանալու ստանալ 10 տոկոսից ավելին, թեպետ այսօր էլ շատերը չեն կարողանում հասկանալ, թե ինչու այդ կուսակցությունը, որը վերջին տարիներին բռնություն էր սերմանում, արժանացավ այդքան մարդկանց աջակցությանը», - հայտարարեց նա:

Իվանիշվիլին գտնում է, որ հասարակության անհասունությունը ցուցաբերվեց նաև նրանում, որ շատերը ընտրություններին չմասնակցեցին (ընտրողների ակտիվությունը կազմում էր ընդամենը 46 տոկոս): «Չեկան մեր կողմնակիցները, թեպետ ամեն օր խնդրում էի, որ մասնակցեն ընտրություններին, որպեսզի ՄԱԸ-ն այդքան տոկոս չկարողանար հավաքել», - ասաց նա, միաժամանակ հավելելով, որ գուցե բարին դա է, քանի որ ՄԱԸ-ի կողմնակիցներն էլ վրացական հասարակության հատվածն են: «Դա մեր ժողովուրդն է, եւ մենք մի ընդհանրություն ենք», - հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ԿՐԿԻՆ ԿԿԵՐԱՊՈՒՆԱՄ»

Հոկտեմբերի 28-ին, լրագրողների հետ հանդիպմանը, Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին վստահեցրեց, որ նոր նախագահի ընտրության կապակցությամբ կառավարությունում փոփոխություններ չեն լի-

նի: «Տեսականորեն ամեն ինչ կարող է պատահել, սակայն գործնականում այդ առումով ես ոչ մի ծրագիր չունեմ: Պետք է մոռանալ, որ նոր վարչապետը, որի մասին կհայտարարենք, կունենա իրավասություններ եւ կարող է կատարել ցանկացած փոփոխություն: Բնականաբար, դրա հավանականությունը փոքր է, քանի որ նա մեր թիմի անդամ է եւ քաջատեղյակ ընդհանուր դիրքորոշմանը: Գործնականում, ինչ-ինչ փոփոխություններ կարող են լինել, թեպետ, ըստ իս, բոլոր նախարարները կմնան իրենց պաշտոններում», - հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

Անդրադառնալով նոր վարչապետի թեկնածության հարցին՝ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ դա հայտնի կդառնա մոտ օրեր: «Շաբաթ օրը՝ նոյեմբերի 2-ին, ես կներկայացնեմ վարչապետին, եւ բոլորը այդ մասին կիմանան», - հայտարարեց վարչապետը: Միաժամանակ, նա ընդգծեց, որ, անհրաժեշտության դեպքում, կարող է վերադառնալ քաղաքականություն, թեպետ նման իրավիճակի հավանականությունը շատ քիչ է համարում: «Ցանկանում եմ դիմել հոռետեսներին. եթե դուք գտնում եք, որ առանց ինձ կուրսը չի պահպանվի, եւ անհրաժեշտություն կլինի, ապա, բնականաբար, ես կմնամ երկրի ծառայությունում: Սակայն, իմ կարծիքով, նման անհրաժեշտություն չի լինի», - հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԿՈՇԱԲԻՏԱՅԻԱՅԻ ԱՎԱՐՏԸ ՄԻԱԿՈՒՄԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ»



(Սկզբը՝ 1-ին էջում)

վել է, եւ տեղի է ունեցել քաղաքական միասնություն», - հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Միաժամանակ, նա նշեց, որ չի բացառում համագործակցությունը «Միասնական ազգային շարժման» հետ, թեպետ հստակեցրեց, որ համագործակցության ոլորտը կարող է լինել միայն արտաքին քաղաքականությունը: «Միակ հարցը, որով մենք կարող ենք համաձայնության հասնել ազգային շարժման հետ, դա միջազգային ասպարեզում Վրաստանի շահերն են», - հայտարարեց նորընտիր նախագահը:

Անդրադառնալով նախագահական ընտրություններից հետո կատարելիք քայլերին՝ Գիորգի Մարգվելաշվիլին ընդգծեց Վիլնյուսի գազաթափոցի նշանակությունը: «Վիլնյուսյան հանդիպումը մեզ համար կարեւոր նշանակություն ունի, քանի որ այն մեր եվրոպական ընտրությունն է, եւ կարեւոր է, որ դա ընդունեն նաև մեր եվրոպական գործընկերները: Այն, ինչ կատարվի Վիլնյուսում, ԵՄ-ի ասոցիացման մասին համաձայնությունը մեզ համար սկիզբն է, ինչը կստեղծի իմաստուն ցիկլը՝ որպես եվրոպական ընտանիքի անդամ, մեր երկրի կարգավիճակի հաստատման հարցում», - հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՆԱԽԱՂԵՂ ՃԱԾՐ ԷՐ



Հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրություններում ընտրողների ակտիվությունն ամենախաղաղ ցածր էր եւ կազմում էր ընդամենը 46 տոկոս:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, ընտրություններին մասնակցել է 1646350 ընտրող: Այն դեպքում, երբ ընտրողների ընդհանուր քանակությունը կազմում է 3537719 մարդ:

Հիշեցնենք, որ երկրի տարածքում բացվել էր 3655 ընտրական տեղամաս եւ 34 լրացուցիչ հատուկ տեղամաս: Ընտրություններին հետեւում էր 60 տեղական (19746 դիտորդ) եւ 65 միջազգային (1241) կազմակերպություն: Ընտրությունների ընթացքը լուսաբանում էր 152 (1381 լրագրող) լրատվամիջոց, որից 84-ը՝ արտասահմանյան:

ՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՔՎԵԱՐԿԵԼ

Հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրություններին «Վրացական երազանք» կոալիցիայի նախագահության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին, գրեթե առանց բացառության, հաղթեց բոլոր մունիցիպալիտետներում: Ընդհանուր առմամբ, Գիորգի Մարգվելաշվիլին ստացավ ընտրություններին մասնակցող ընտրողների 62,1 տոկոսի աջակցությունը:

Ընտրություններին առաջադրված 23 թեկնածուներից առաջատարի հիմնական մրցակիցներն էին «Միասնական ազգային շարժման» թեկնածու Դավիթ Բաբրաձեն եւ «Ժողովրդավարական շարժում» Միասնական Վրաստանի լիդեր Նինո Բուրջանաձեն: Բաբրաձեն վերջին հաշվով հավաքեց քվեների 21,73 տոկոսը, իսկ Նինո Բուրջանաձեն՝ 10,18 տոկոսը: Մյուս թեկնածուներից մեկ տոկոսից ավելի ձայներ ստացան միայն երկուսը՝ լեյբորիստ Շավվա Նաթելաշվիլին (2,88) եւ Քրիստոնեա-ժողովրդավար Գիորգի Թարգամաձեն (1,05 տոկոս):

Սամցխե-Չավախեթի բոլոր մունիցիպալիտետներում, ինչպես ընդհանրապես ողջ երկրի մասշտաբով, Գիորգի Մարգվելաշվիլու հաղթանակը ավելի քան տասնպիսյակ էր:

ՄԻԱՍԵՍԱՍԵՐ

Մունիցիպալիտետում «Վրացական երազանք» կոալիցիայի թեկնածուի օգտին քվեարկել է ընտրողների 66,98 տոկոսը: Բաբրաձեն արժանացել է ընտրողների 19,23, իսկ Նինո Բուրջանաձեն՝ 10,66 տոկոսի աջակցությանը:

ՄԻԱՆՆԻՍԵ

Մունիցիպալիտետում Գիորգի Մարգ-

վելաշվիլու աջակիցները կազմեցին ընտրողների 55,26 տոկոսը, Դավիթ Բաբրաձեն օգտին քվեարկել էր 29,02, իսկ Նինո Բուրջանաձե օգտին՝ 10,19 տոկոսը:

ՆԻՆՈՍԻՆԻՍ

Մունիցիպալիտետում Գիորգի Մարգվելաշվիլու հաղթանակը ավելի քան տասնպիսյակ էր: Տեղի ընտրողների 70,8 տոկոսը շրջագծել էր 41 թիվը: Չայնեթի քանակությամբ այստեղ երկրորդը Նինո Բուրջանաձեն էր, որը ստացել էր 14,88 տոկոսի աջակցությունը: Դավիթ Բաբրաձեն իր ակտիվում գրանցեց միտոմինդագի ընտրողների 9,75 տոկոսի քվեները:

ՄՍԴԻՆՆԱ

Մունիցիպալիտետի ընտրողների 57,03 տոկոսը գերադասությունը հանձնեց կոալիցիայի թեկնածուին: Ընտրությունների մասնակիցների մոտ մեկ քառորդի (23,72 տոկոս) աջակցությանը արժանացավ Դավիթ Բաբրաձեն, իսկ Նինո Բուրջանաձեն ստացավ ձայների 14,97 տոկոսը:

ԲՈՐԺՈՒՄ

Մունիցիպալիտետում Գիորգի Մարգվելաշվիլին ստացավ ընտրողների քվեների 67,25 տոկոսը: Դավիթ Բաբրաձեն

եւ Նինո Բուրջանաձեն, զբաղեցնելով երկրորդ եւ երրորդ տեղերը, արժանացան 13,86 եւ 10,36 տոկոսի աջակցությանը:

ՏԱԿԱ

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի այս մունիցիպալիտետում եւս համոզիչ հաղթանակի էր հասել Գիորգի Մարգվելաշվիլին, որի օգտին քվեարկել էր ընտրողների 64,17 տոկոսը: Այստեղ՝ 17,57 տոկոսով, երկրորդը Նինո Բուրջանաձեն էր, իսկ Բաբրաձեն՝ 13,86 տոկոսով բավարարվեց երրորդ հորիզոնականով:

ՄԱՌՆԵՈՒՄ

Մունիցիպալիտետում Գիորգի Մարգվելաշվիլու օգտին քվեարկել էր ընտրողների 63,95 տոկոսը: Դավիթ Բաբրաձեն արժանացել էր ընտրողների 25,92, իսկ Նինո Բուրջանաձեն՝ 7,85 տոկոսի աջակցությանը:

ԲՈՒՆԻՍԻ

Մունիցիպալիտետի ընտրողների 64,31 տոկոսը գերադասությունը հանձնեց կոալիցիայի թեկնածուին, 21,62 տոկոսը քվեարկեց «Ազգային շարժման» ներկայացուցչի, իսկ 9,87 տոկոսը՝ «Ժողովրդավարական շարժման» լիդերի օգտին:

ԹԵՐԻՏՎՈՐ

Մունիցիպալիտետում կոալիցիայի թեկնածուն իր օգտին գրանցեց ձայների 61,89 տոկոսը, իր հիմնական մրցակիցներին՝ Դավիթ Բաբրաձենին եւ Նինո Բուրջանաձենին, զիջելով ձայների, համապատասխանաբար՝ 21,15 եւ 10,36 տոկոսը:

ՄԻԽԵԻԼ ՍԱԿԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՆԵՏԳՐՄԱՆ ԵՎ ՆԱՏՕ-ԻՆ ԱՆՂԱՄԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍԸ ԴԵՏՔ Ե ԸՆՐՈՒՆԱԿՎԻ»

Հոկտեմբերի 28-ին Վրաստանի գործող նախագահ Միխեիլ Սակաշվիլին այդ կարգավիճակում իրաժեշտի ուղերթով Չավաթարի նախագահական նստավայրից դիմեց երկրի բնակչությանը:

Իր ելույթում նա խոսեց վերջին ինը տարիների ընթացքում զխավորած կառավարության ձեռքբերումների մասին, խոստովանեց թույլ տրված սխալները: Նախագահը երկրին կոչ արեց շարունակել եվրոպացումը եւ ՆԱՏՕ-ի անդամակցությանն ուղղված կուրսը, ինչը կարող է ապահովել երկրի անվտանգությունը:



Սակաշվիլին նշեց, որ ինքը մտադիր չէ ներողություն խնդրել, որ ոչնչացրել է գողական մտածելակերպը, պայքարել կոռուպցիայի դեմ, կառուցել նոր օբյեկտներ, զարգացրել երկրի էկոնոմիկան: Միաժամանակ, նա պատրաստ է ներողություն խնդրել, որ չափից ավելի է վստահել դատախազության եւ ՆԳՆ-ի առանձին բարձր պաշտոնյաների, թույլ տվել մարդու իրավունքների խախտումներ, բռնության փաստեր:

Սակաշվիլին ընդգծեց, որ զարգացմանը լրջորեն արգելակեց մուսաստանի հետ ընդհարումը: Իր ելույթում Միխեիլ Սակաշվիլին ժողովրդին կոչ արեց հանդուրժողականությամբ, ինչպես միմյանց, այնպես էլ՝ ազգային ու կրոնական փոքրամասնություններին:

«Ես շատ շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն տվեցիք այս տարիներին ծառայել ձեզ: Եվ թող Վրաստանը միշտ առաջ ընթանա», - հայտարարեց նա:

րի նկատմամբ: «Բռնությունը ոչնչի չի հանգեցնի, եւ այն իրավիճակները, որոնք ժամանակ առ ժամանակ ծագում էին երկրում, ձեռնտու են միայն մեր թշնամիներին», - ասաց նա:

Նախագահը խոստովանեց, որ շատ բան չի հասցրել անել եւ շատ է ցավում, որ չկարողացավ իրականացնել Վրաստանի միավորումը:

«ժամանակն է, որ դուք հանգստանաք ինձանից, հավանաբար, այդ ժամանակը հասել է, սակայն համոզված եմ, որ իմ օրոք մեծացած երիտասարդությունը կշարունակի մեր ընդհանուր գործը», - ասաց նա:

Նա շնորհակալություն հայտնեց երկրի բնակչությանը. «Ես շատ շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն տվեցիք այս տարիներին ծառայել ձեզ: Եվ թող Վրաստանը միշտ առաջ ընթանա», - հայտարարեց նա: